ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-176-Ն օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 49.1-րդ հոդվածով՝

«Հոդված 49.1. Անցանկալի հաղորդագրություն

1. Անցանկալի հաղորդագրությունը ձեռնարկատիրական նպատակներով հեռախոսազանգի, ֆաքսի, էլեկտրոնային փոստի, կարճ հաղորդագրությունների (SMS/MMS) և էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով ուղարկվող հաղորդագրություն է, որը ստանալու համաձայնությունը ֆիզիկական անձը չի տվել կամ հետ է կանչել այն:

2. Հաղորդագրություն ուղարկելու համաձայնություն ստացած անձը պարտավոր է նախատեսել հասանելի և անվճար միջոցներ ցանկացած ժամանակ համաձայնության հետ կանչելն ապահովելու համար:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված համաձայնությունը տալու և այն հետ կանչելու, ինչպես նաև դրանց հետևանքների հետ կապված հարաբերությունները սահմանվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 189.17-րդ հոդվածը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով՝

«1.1. Անցանկալի հաղորդագրություն պատվիրելը կամ ուղարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ներկա իրավիճակը, առկա խնդիրները

2015 թվականի մայիսի 18-ին ընդունվել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք): Օրենքում առկա չեն դրույթներ, որոնք կարգավորում են անձնական տվյալների պաշտպանությունը անցանկալի հաղորդագրություններից:

Հարկ է նշել, որ օրենսդրության մեջ բացակայում են այնպիսի իրավանորմեր, որոնք սահմանում են՝

- անցանկալի հաղորդագրության հասկացությունը, դրա իրականացման ձևերը,
- ցանկացած ժամանակ տվյալների սուբյեկտի՝ իր տվյալների մշակումից հրաժարվելու իրավունքի իրացման (տվյալներ մշակողի՝ տվյալների մշակումը դադարեցնելու պարտականության կատարման) առանձնահատկությունները և այլն:

Այս առանձնահատկությունների իրավական կարգավորման բացակայությունը ներկայումս հանգեցնում է հազարավոր քաղաքացիների անձնական տվյալների պաշտպանության իրավունքի զանգվածային խախտումների և այդ խախտումները կանխարգելելու անհնարինությանը: Մասնավորապես, բազմաթիվ քաղաքացիներ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով, հատկապես SMS-ների միջոցով առանց (նախնական) համաձայնության, առանց համապատասխան ծանուցման ստանում են գովազդային և այլ բնույթի հաղորդագրություններ: Հաճախ նման հաղորդագրությունները առանց բաժանորդի համաձայնության ուղարկվում են երրորդ անձանցից կամ գովազդային հաղորդագրություններ տարածելու մեջ մասնագիտացած կազմակերպությունների կողմից, և

այդ դեպքերում էլեկտրոնային հաղորդակցության օպերատորները չունեն օրենսդրությամբ սահմանված նման հաղորդագրությունները արգելափակելու պարտականություն: Բացի այդ օպերատորները չեն ապահովում շարժական կապի ցանցում այնպիսի տեխնիկական միջոցների հնարավորությունը, որոնք թույլ կտան բաժանորդներին էլեկտրոնային եղանակով հրաժարվել անցանկալի հաղորդագրություններ ստանալուց:

Անցանկալի հաղորդագրություններից պաշտպանվելու մեխանիզմներն ուղղակիորեն ամրագրված են ԵՄ անդամ պետությունների օրենսդրություններում (անցանկալի/չպահանջված հաղորդագրությունների կամ ուղղակի մարքեթինգի վերաբերյալ նորմերում): Ուսումնասիրվել են Եվրոպական միության անդամ պետություններից **Միացյալ Թագավորության, Ֆրանսիայի, Բելգիայի, Էստոնիայի**, ինչպես նաև **Վրաստանի** կարգավորման փորձը: Այդ պետություններում, ինչպես և ԵՄ անդամ մյուս բոլոր պետություններում օրենսդրություններն ուղղակիորեն կարգավորում են անցանկալի/չպահանջված հաղորդագրություններ կամ ուղղակի մարքեթինգը:

Առաջարկվող լուծումները

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ մշակվել են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

Բացի այդ որպես նախագծերի ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսվել է պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիսը: Այս ժամկետի նպատակը հաղորդագրություն ուղարկելու համաձայնություն ստացած անձանց՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի դրույթներին համապատասխան հասանելի և անվճար միջոցներով համաձայնություն ստանալու կամ հետ կանչելու հնարավորության նախատեսումն է:

Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունման արդյունքում հստակ կսահմանվի անցանկալի հաղորդագրություններից պաշտպանվելու իրավունքը, տվյալներ օգտագործողի պարտականությունները: Միաժամանակ, առաջարկվող իրավակարգավորման արդյունքում անձնական տվյալների սուբյեկտի համար ապահովվելու է հնարավորություն՝ հասանելի և անվճար միջոցներով հայտնելու տվյալների մշակումը դադարեցնելու վերաբերյալ իր մտադրության մասին:

Այսպիսով, օրենսդրական առաջարկվող հիմքերի առկայությունը կհանգեցնի ներկայումս առանց տվյալների սուբյեկտների համաձայնության նրանց կոնտակտային տվյալները անցանկալի հաղորդագրություններ ուղարկելու նպատակով օգտագործելու արատավոր պրակտիկայի վերացմանը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում, և այն համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում: